ՀՀ Տավուշի մարզի Ն. Կարմիրաղբյուրի Լ. Ադամյանի անվան
միջնակարգ դպրոց

Հասցե՝ 6 փող. 2շենք, կայք՝ https://nkarmiraghbyur.schoolsite.am/, mail՝ nkadproc@gmail.com

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Ներքին Կարմիրաղբյուրի Լ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Մաթեմատիակյի (30 դասաժամ), Պատմության (18 դասաժամ), Հասարակագիտության (9 դասաժամ), Շախմատի(3 դասաժամ), Դասվարի (17 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ՝ ներկայացնել՝- դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(Դիպլոմ), անձը հաստատող փաստաթուղթ, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն(առկայության դեպքում), ինքնակենսագրություն(Ձև 5), այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ, հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում), որակավորման տարկարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 16-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուրի Լ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն գ. Ներքին Կարմիրաղբյուր, փ.6, շ.2:

Տեղեկությունների համար զանգահարել 094335515 հեռախոսահամարով: